

Ընդունված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական  
համալսարան» հիմնադրամի Ռուսաց և օտար  
լեզուների ֆակուլտետի խորհրդի 20.01.2021թ.  
№ 8 նիստի որոշմամբ

ԲՊՀ հիմնադրամի Ռուսաց և օտար լեզուների  
ֆակուլտետի խորհրդի նախագահ՝

Ն. Ի. Տատկալո

Հաստատված է՝

«Վ. Բրյուսովի անվան պետական  
համալսարան» հիմնադրամի գիտական  
խորհրդի 03.03.2021թ. № 6 նիստի  
որոշմամբ

ԲՊՀ հիմնադրամի ղեկավար,  
գիտական խորհրդի նախագահ՝

Կ. Վ. Հարությունյան

**«Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ  
ՌՈՒՍԱՑ ԵՎ ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ  
ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ  
Նոր խմբագրությամբ**

**I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ**

1. «Վ. Բրյուսովի անվան պետական համալսարան» (այսուհետ՝ ԲՊՀ) հիմնադրամի Ռուսաց և օտար լեզուների (այսուհետ՝ ՌՕԼ) ֆակուլտետը ԲՊՀ հիմնադրամի կառուցվածքային ստորաբաժանում է:
2. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է ՀՀ օրենսդրությամբ, ԲՊՀ հիմնադրամի կանոնադրությամբ, սույն կանոնադրությամբ և այլ ներքին կարգերով, ինչպես նաև ԲՊՀ հիմնադրամի կառավարման մարմինների, ՌՕԼ ֆակուլտետի կառավարման մարմինների՝ իրենց իրավասության շրջանակում ընդունած իրավական ակտերով:
3. Ֆակուլտետի անվանումն է՝  
հայերեն՝ Ռուսաց և օտար լեզուների ֆակուլտետ (ՌՕԼՖ)  
ռուսերեն՝ Факультет русского и иностранных языков (ФРИЯ)  
անգլերեն՝ Faculty of Russian and Foreign Languages (FRFL)

4. Ֆակուլտետն ունի կնիք, սահմանված կարգով կարող է ունենալ ԲՊՀ հիմնադրամի տարբերանշանով ձևաթուղթ (բլանկ) և անհատականացման այլ միջոցներ:

## **II. ԲՊՀ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՌՕԼ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ ԵՎ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ**

5. ՌՕԼ Ֆակուլտետը ուսումնառության տարբեր ձևերով իրականացնում է սովորողների բարձրագույն մասնագիտական և հետբուհական կրթությունը մասնագիտության կրթական ծրագրերով, ինչպես նաև կատարում գիտական, մանկավարժական, մեթոդական, ուսումնասօժանդակ, վարչական, ուսումնադաստիարակչական աշխատանքներ:
6. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ Ֆակուլտետի կազմում ընդգրկված են ամբիոններ (Անգլերենի, Ռուսաց և սլավոնական լեզուների, Համաշխարհային գրականության և մշակույթի), ինչպես նաև կենտրոններ (Ռուսաց լեզվի և մշակույթի), (Լեհերեն լեզվի և մշակույթի):
7. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ Ֆակուլտետն իր իրավասության սահմաններում իրավունք ունի ընդունելու ինքնուրույն որոշումներ:
8. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ Ֆակուլտետը ստեղծվում, վերակազմավորվում կամ լուծարվում է ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդի առաջարկությամբ, որը հաստատվում է ԲՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի որոշմամբ՝ ռեկտորի ներկայացմամբ:
9. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ Ֆակուլտետը համակարգում է իր կազմում ընդգրկված ստորաբաժանումների ուսումնամեթոդական, գիտահետազոտական, ուսումնադաստիարակչական գործունեությունը:

### III. ՌՕԼ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ

10. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի կառավարման մարմիններն են ֆակուլտետի խորհուրդը և դեկանը:
11. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհուրդը ՌՕԼ ֆակուլտետի կառավարման կոլեգիալ մարմինն է, որի նախագահը ՌՕԼ ֆակուլտետի դեկանն է:
12. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի որոշումները պարտադիր են ֆակուլտետի ստորաբաժանումների աշխատակիցների, պրոֆեսորադասախոսական կազմի, սովորողների (ուսանողներ, ասպիրանտներ և հայցորդներ) համար:
13. Ֆակուլտետի խորհրդի անդամների ընդհանուր թիվը չի կարող գերազանցել 32-ը:
14. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհուրդը կազմված է ի պաշտոնե և ընտրովի անդամներից: Խորհրդի ի պաշտոնե անդամների թիվը չի կարող գերազանցել ՌՕԼ խորհրդի անդամների ընդհանուր թվի 50 տոկոսը:
15. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի կազմի մեջ ի պաշտոնե ընդգրկվում են դեկանը՝ որպես նախագահ, դեկանի տեղակալը (տեղակալները), ՌՕԼ ֆակուլտետի կազմում գործող ամբիոնների վարիչները, կենտրոնների և այլ ստորաբաժանումների ղեկավարները և ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը:
16. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամ կարող են ընտրվել ԲՊՀ հիմնադրամի պրոֆեսորներ, դոցենտներ, ավագ դասախոսներ, դասախոսներ, սովորողներ: ԲՊՀ հիմնադրամի ֆակուլտետի խորհրդի կազմում, ելնելով ՌՕԼ ֆակուլտետի մասնագիտական առանձնահատկություններից և ուղղվածություններից, ըստ անհրաժեշտության կարող են ընտրվել նաև համապատասխան ոլորտի (ոլորտների) ներկայացուցիչներ այլ ուսումնական հաստատություններից և կազմակերպություններից:

17. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի ընտրովի անդամներին կարող են առաջադրել ֆակուլտետի դեկանը, ֆակուլտետի կառուցվածքում ընդգրկված և տվյալ ֆակուլտետը սպասարկող ամբիոնները և գիտաուսումնական ստորաբաժանումները: Խորհրդի ընտրված անդամ է հանդիսանում նաև որակի ապահովման ստորաբաժանման ներկայացուցիչը:
18. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամների թվի 25 տոկոսը սովորողներ են (այդ թվում՝ ֆակուլտետի ուսանողական խորհրդի նախագահը), որոնց առաջադրումն ու ընտրությունն իրականացնում է ֆակուլտետի ուսանողական խորհուրդը: Ընտրված թեկնածուներին հաստատում է ԲՊՀ հիմնադրամի ուսանողական խորհրդի ընդհանուր ժողովը:
19. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստերին, ըստ անհրաժեշտության խորհրդակցական ձայնի իրավունքով կարող են մասնակցել նաև հրավիրված այլ մասնագետներ:
20. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի կազմը հաստատվում է ԲՊՀ հիմնադրամի ռեկտորի հրամանով:
21. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի լիազորությունների ժամկետը 5 տարի է: Խորհրդի լիազորությունների ավարտից 45 օրացուցային օր առաջ ՌՕԼ ֆակուլտետի դեկանը կազմակերպում է ֆակուլտետի խորհրդի նոր կազմի ձևավորումը՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգով, և ներկայացնում է այն ԲՊՀ հիմնադրամի ռեկտորի հաստատմանը ֆակուլտետի խորհրդի լիազորությունների ավարտից 30 օրացուցային օր առաջ:
22. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամի լիազորությունը վաղաժամկետ դադարում է՝
  - 1) ֆակուլտետի դեկանին տրված խորհրդի կազմից դուրս գալու վերաբերյալ գրավոր դիմումի հիման վրա,

- 2) խորհրդի լիազորությունների ժամկետի ավարտման դեպքում,
- 3) զբաղեցրած պաշտոնից ազատվելու կամ համապատասխան կարգավիճակը կորցնելու դեպքում,
- 4) անհարգելի պատճառով պարբերաբար նիստերին չմասնակցելու՝ տարվա ընթացքում գումարվող նիստերի կեսից բացակայելու դեպքում,
- 5) համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման կամ ուսանողական խորհրդի՝ իր կողմից առաջադրված անդամի փոփոխության որոշման հիման վրա,
- 6) դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով նրան անգործունակ, անհայտ բացակայող ճանաչելու կամ մահվան դեպքում:

23. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամի լիազորությունները դադարելու դեպքում նրա փոխարեն նոր անդամ նշանակվում է սույն կանոնակարգի համաձայն՝ ոչ ուշ, քան ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամի թափուր տեղ առաջանալուց հետո՝ 30 օրվա ընթացքում:

24. ՌՕԼ ֆակուլտետի խորհուրդը՝

- 1) ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդի կողմից ընդունած ֆակուլտետի օրինակելի կանոնադրության հիման վրա մշակում ու հավանություն է տալիս ՌՕԼ ֆակուլտետի կանոնադրությանը՝ իր առանձնահատկությունների համաձայն, և ներկայացնում ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդի հաստատմանը,
- 2) ԲՊՀ հիմնադրամի ռեկտորին ներկայացնում է առաջարկություն ՌՕԼ ֆակուլտետի կառուցվածքում ամբիոններ և կառուցվածքային այլ ստորաբաժանումներ ստեղծելու, լուծարելու, վերակազմավորելու վերաբերյալ, որը քննարկվում է ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդում և հաստատվում ԲՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի կողմից,

- 3) սահմանված կարգի համաձայն՝ իրականացնում է ՌՕԼ ֆակուլտետի ղեկանի ու ամբիոնների վարիչների ընտրությունը և ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ընտրության արդյունքները,
- 4) սահմանված կարգի համաձայն կազմակերպում է ՌՕԼ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթները, իրականացնում ընտրությունը և ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդի հաստատմանն է ներկայացնում ընտրության արդյունքները,
- 5) ԲՊՀ հիմնադրամի ռեկտորին է ներկայացնում մասնագիտությունների կրթական ծրագրերը և ուսումնական պլանները՝ ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդում հաստատելու համար,
- 6) ընդունում է որոշումներ ՌՕԼ ֆակուլտետի կրթական, գիտական աշխատանքների, միջազգային համագործակցության ու կապերի և այլ հարցերի վերաբերյալ,
- 7) քննարկում և գնահատում է ՌՕԼ ֆակուլտետի ղեկանի ամենամյա հաշվետվությունը և գնահատում նրա գործունեությունը,
- 8) քննարկում և հաստատում է ՌՕԼ ֆակուլտետի ամբիոնների, գիտաուսումնական կենտրոնների և ՌՕԼ ֆակուլտետի այլ ստորաբաժանումների ղեկավարների ընթացիկ և ամենամյա հաշվետվությունները՝ իրականացված ուսումնամեթոդական և գիտահետազոտական աշխատանքների մասին,
- 9) հաստատում է ՌՕԼ ֆակուլտետի ամբիոնների գիտահետազոտական հաշվետվությունները և որակավորման բարձրացման աշխատանքային պլանները,
- 10) ամփոփում է սովորողների ուսումնական և արտադրական պրակտիկայի, քննաշրջանների և ամփոփիչ ատեստավորման արդյունքները,
- 11) ԲՊՀ հիմնադրամի հոգաբարձուների խորհրդում և ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդում առաջադրում է ՌՕԼ ֆակուլտետի ներկայացուցիչներին,
- 12) լուծում է սույն կանոնադրությունից և ԲՊՀ հիմնադրամի ներքին իրավական այլ ակտերից բխող ՌՕԼ ֆակուլտետի ուսումնամեթոդական, գիտահետազոտական և վարչական գործունեությանը վերաբերող այլ հարցեր:

25. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստերը գումարվում են յուրաքանչյուր ուսումնական տարվա ընթացքում առնվազն 8 անգամ:
26. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստը համարվում է իրավագոր, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը՝ ներկայության համապատասխան փաստաթղթում ստորագրությամբ: ՌՕԼ ֆակուլտետի խորհրդում որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե ՌՕԼ ֆակուլտետի խորհուրդը քվեարկության անցկացման վերաբերյալ այլ որոշում չի ընդունում:
27. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհուրդը ՌՕԼ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման մրցույթներն անցկացնում է՝ համաձայն սահմանված կարգի:
28. ՌՕԼ ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական համակազմի թափուր պաշտոնների տեղակալման և գիտական կոչումների շնորհման մրցույթների փաստաթղթերի ուսումնասիրման նպատակով խորհուրդը մշտական հիմունքներով իր կազմից ընտրում է 5 հոգուց բաղկացած մրցութային հանձնաժողով: Մրցութային հանձնաժողովն իր կազմից ընտրում է հանձնաժողովի նախագահ:
29. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունը առաջադրվում է ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նախագահի կողմից և քննարկվում է խորհրդի նիստում:
30. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարը նիստի անցկացումից առնվազն երկու աշխատանքային օր առաջ նախապատրաստում է ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստի օրակարգը և խորհրդի անդամներին տեղեկացնում այդ մասին:
31. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստերն արձանագրվում են ֆակուլտետի խորհրդի քարտուղարի կողմից: Նիստերի արձանագրությունները ստորագրում են ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նախագահն ու քարտուղարը:

Արձանագրությունները, սահմանված կարգի համաձայն, պահվում են ՌՕԼ ֆակուլտետի դեկանատում:

32. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստին ներկայացվող հարցերի վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը պատրաստում է ՌՕԼ ֆակուլտետի դեկանատի աշխատակազմը և հարցը ներկայացնող ՌՕԼ ֆակուլտետի համապատասխան ամբիոնը կամ ստորաբաժանումը:
33. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նախագահը խորհրդի անդամներին տեղեկացնում է ընդունված որոշումների կատարման մասին:
34. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի բացակայության դեպքում ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստը նախագահելու համար խորհուրդն իր կազմից ընտրում է նիստը նախագահող անձ: Ընտրությունը կատարվում է բաց քվեարկությամբ՝ ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:
35. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի գործունեությունը կազմակերպում և ղեկավարում է ՌՕԼ ֆակուլտետի դեկանը:
36. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանն ընտրվում է ՌՕԼ ֆակուլտետի խորհրդում՝ սույն կանոնադրությամբ սահմանված կարգին համապատասխան:
37. Ընտրությունների արդյունքների հիման վրա ընտրված դեկանին պաշտոնի է նշանակում ԲՊՀ հիմնադրամի ռեկտորը և սահմանված կարգով նրա հետ կնքում է աշխատանքային պայմանագիր 5 տարի ժամկետով: Դեկանն իր պաշտոնը կարող է զբաղեցնել ոչ ավելի, քան 2 ժամկետ անընդմեջ:
38. ՌՕԼ ֆակուլտետի դեկան կարող է ընտրվել գիտամանկավարժական աշխատանքի փորձ ունեցող այն անձը, որը ունի գիտությունների թեկնածուի կամ դոկտորի գիտական աստիճան:
39. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանը՝



- 1) ղեկավարում է ՌՕԼ ֆակուլտետի գործունեությունը, ներկայացնում է ֆակուլտետը ԲՊՀ հիմնադրամի այլ ստորաբաժանումների, հանրապետական և օտարերկրյա կազմակերպությունների հետ հարաբերություններում,
- 2) ապահովում է ԲՊՀ հիմնադրամի կառավարման մարմինների՝ ՌՕԼ ֆակուլտետին վերաբերող որոշումների կատարումը,
- 3) ապահովում է ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի որոշումների կատարումը,
- 4) ԲՊՀ հիմնադրամի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամների կազմը,
- 5) ԲՊՀ հիմնադրամի ռեկտորի հաստատմանն է ներկայացնում ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարի թեկնածությունը,
- 6) սահմանված կարգերի համաձայն՝ ԲՊՀ հիմնադրամի ռեկտորին ներկայացնում է առաջարկություններ՝ ուսանողներին կուրսից կուրս փոխադրելու, հեռացնելու, վերականգնելու, ակադեմիական արձակուրդ ձևակերպելու, խրախուսելու, կարգապահական տույժի ենթարկելու, ինչպես նաև ֆակուլտետից ֆակուլտետ ուսանողների տեղափոխման ու ակադեմիական շարժունության՝ ներառյալ կրեդիտների կուտակման և փոխանցման վերաբերյալ,
- 7) կազմում է ուսումնական դասացուցակները և հետևում դրանց կատարմանը,
- 8) սահմանված կարգով կազմակերպում և հսկում է միջանկյալ և կիսամյակային քննությունների, ամփոփիչ ատեստավորման անցկացման գործընթացները,
- 9) կազմակերպում և հսկում է ուսումնական գործընթացը ՌՕԼ ֆակուլտետում,
- 10) կազմակերպում և հսկում է ՌՕԼ ֆակուլտետի համապատասխան ոլորտների որակի ապահովման գործընթացները,
- 11) կազմակերպում և անցկացնում է միջամբիոնային խորհրդակցություններ, գիտական և գիտամեթոդական խորհրդակցություններ և սեմինարներ,
- 12) իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն կանոնադրությամբ նախատեսված այլ լիազորություններ և ՌՕԼ ֆակուլտետի ուսումնադաստիարակչական, ուսումնամեթոդական, գիտամեթոդական ու գիտահետազոտական գործունեության հետ կապված այլ աշխատանքներ:

40. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստերի միջև ընկած ժամանակահատվածում ՌՕԼ ֆակուլտետին առնչվող ընթացիկ հարցերը քննարկվում և համապատասխան լուծում են ստանում դեկանատի նիստում՝ դեկանի, դեկանի տեղակալի (տեղակալների), ՌՕԼ ֆակուլտետի կազմի մեջ մտնող ամբիոնների վարիչների և կենտրոնների ղեկավարների, ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարի, ուսանողական խորհրդի և ուսանողական գիտական ընկերության նախագահների մասնակցությամբ:

41. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանատի նիստում քննարկվող հարցերն առաջարկվում են դեկանատի անդամների կողմից: Դեկանատի նիստերն արձանագրվում են և ստորագրվում նիստի նախագահի և ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարի կողմից:

#### **IV. ՌՕԼ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԴԵԿԱՆԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԸ**

42. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնն առաջանալու դեպքում ԲՊՀ հիմնադրամը հայտարարում է բաց մրցույթ:

43. ՌՕԼ ֆակուլտետի դեկանի ընտրության մասին մրցույթի հայտարարությունը հաստատվում է ԲՊՀ հիմնադրամի ռեկտորի հրամանով և մրցույթի անցկացումից առնվազն 30 օրացուցային օր առաջ հրապարակվում է ԲՊՀ հիմնադրամի համացանցային կայքում և/կամ արտաքին համալրման աղբյուրներում, ինչպես նաև աշխատակիցների շրջանում տարածվում է ԲՊՀ հիմնադրամի էլեկտրոնային փոստով:

44. Հայտարարության տեքստում նշվում են՝

- 1) թեկնածուների առաջադրման պայմանները,
- 2) դիմումների ընդունման վայրը և վերջնաժամկետը,
- 3) մրցույթի անցկացման վայրը և ամսաթիվը /տարեթիվը, օրը, ժամը/,
- 4) անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը՝ սույն կարգի 46-րդ կետի

համապատասխան,

- 5) դեկանի թեկնածուին ներկայացվող պահանջները՝ սույն կանոնակարգի 38-րդ կետին համապատասխան:

45. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի պաշտոնի թեկնածությունները կարող են առաջադրվել ԲՊՀ հիմնադրամի գիտաուսումնական ստորաբաժանումների կողմից կամ ինքնաառաջադրման սկզբունքով՝ համաձայն սույն կանոնադրության 38-րդ կետի պահանջների:

46. Մրցույթին մասնակցելու համար ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուն պետք է ներկայացնի հետևյալ փաստաթղթերը.

- 1) ինքնաառաջադրման դեպքում՝ դիմում ռեկտորի անունով, իսկ ԲՊՀ հիմնադրամի ուսումնագիտական ստորաբաժանումների կողմից առաջադրվելու դեպքում՝ համապատասխան ստորաբաժանման որոշումը և թեկնածուի գրավոր համաձայնությունը,
- 2) կադրերի հաշվառման անձնական թերթիկ՝ լուսանկարով (3x4 չափի), որում նշված է մշտական բնակության հասցեն, քաղաքային կամ բջջային հեռախոսահամարները, էլեկտրոնային փոստի հասցեն,
- 3) տեղեկանք և բնութագիր վերջին աշխատանքի վայրից,
- 4) ինքնակենսագրություն,
- 5) հրատարակված գիտական աշխատանքների, գրքերի, մեթոդական ձեռնարկների և այլ աշխատությունների ցուցակ,
- 6) բարձրագույն կրթության դիպլոմի (դիպլոմների) և գիտական աստիճանն ու կոչումը հավաստող վկայականների պատճեններ,
- 7) թեկնածուի կողմից ներկայացված ֆակուլտետի գործունեության ծրագիր՝ փակ և իր կողմից ստորագրված ծրարով, որը բացվում է ՌՕԼ ֆակուլտետի՝ դեկանի ընտրությանը նվիրված խորհրդի նիստում:

47. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար փաստաթղթերի հանձնումն ավարտվում է մրցույթի

անցկացման օրվանից 15 օրացուցային օր առաջ:

48. Թափուր պաշտոնի բաց մրցույթին մասնակցելու համար ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուներն անհրաժեշտ փաստաթղթերը (համարակալված և յուրաքանչյուր էջի հետնամասում ստորագրված) հանձնում են ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարին:

49. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուների փաստաթղթերն ընդունելու նպատակով ֆակուլտետի խորհրդի քարտուղարը բացում է գործերի ընդունման գրանցաթերթիկ, որը կնքվում և փակվում է փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետի ավարտին:

50. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուի փաստաթղթերն ընդունելուց հետո ֆակուլտետի խորհրդի քարտուղարը կատարում է համապատասխան գրառում գրանցաթերթիկում, ստուգում է ներկայացված փաստաթղթերի ամբողջականությունը և համապատասխանությունը սույն կանոնադրության 46-րդ կետի պահանջներին:

51. Փաստաթղթերի ամբողջականության և համապատասխանության ստուգումից հետո ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարը ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուին տրամադրում է փաստաթղթերի հանձնումը հավաստող տեղեկանք, որում նշվում է հանձնված փաստաթղթերի էջերի ընդհանուր թիվը, իսկ փաստաթղթերի թերի լինելու դեպքում նաև նշվում են պակասող կամ թերություններով կազմված փաստաթղթերը: ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուն հաստատում է տեղեկանքի ստացումը՝ ստորագրելով պատճենի վրա:

52. ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուն պակասող կամ թերություններով կազմված փաստաթղթերը պետք է լրացուցիչ ներկայացնի մինչև փաստաթղթերի հանձնման ավարտի օրը: Եթե թեկնածուն իր փաստաթղթերը հանձնել է փաստաթղթերի հանձնման վերջին օրը, ապա նրան տրվում է լրացուցիչ 2 աշխատանքային օր քարտուղարին դրանք ներկայացնելու համար:

53. Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետից հետո ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուի կողմից իր գործունեության ծրագրի հանձնում կամ փոփոխություն չի թույլատրվում: Սահմանված վերջնաժամկետում թեկնածուի կողմից գործունեության ծրագրի չներկայացնելու դեպքում նրա թեկնածությունը չի քննարկվում:

54. Փաստաթղթերի ընդունման վերջնաժամկետից 3 աշխատանքային օր հետո ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարը ընդունված փաստաթղթերի փաթեթները հանձնում է ԲՊՀ հիմնադրամի ուսումնական բաժնի պետին:

55. ԲՊՀ հիմնադրամի ուսումնական բաժինը մրցույթի անցկացումից առնվազն 3 աշխատանքային օր առաջ հրապարակում է ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուների ցուցակը՝ տեղադրելով ԲՊՀ հիմնադրամի համացանցային կայքում և փակցնելով ֆակուլտետի հայտարարությունների տախտակին:

56. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի ընտրության համար գումարվում է ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստ, որի օրակարգում ընդգրկվում են հետևյալ հարցերը.

- 1) ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուների՝ սահմանված պահանջներին համապատասխանության հարցի որոշում,
- 2) ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուների կողմից իրենց ծրագրերի ներկայացում,
- 3) հարցեր ՌՕԼ ֆակուլտետի դեկանի թեկնածուներին և խորհրդի անդամների ելույթներ,
- 4) հաշվիչ հանձնաժողովի ձևավորում,
- 5) դեկան ընտրելու նպատակով գաղտնի քվեարկության կազմակերպում,
- 6) դեկանի ընտրության արդյունքների ամփոփում:

57. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի ընտրության համար գումարվող ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստը նախագահում է բուհի ռեկտորը կամ պրոռեկտորը: ՌՕԼ ֆակուլտետի դեկանի ընտրության համար գումարվող նիստում քննարկվում է միայն դեկանի ընտրության հարցը:

58. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի ընտրության համար գումարված ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստը համարվում է իրավագոր, եթե դրան մասնակցում է խորհրդի անդամների առնվազն 2/3-ը, որոնց թվում չեն հաշվարկվում դեկանի մրցույթի այն թեկնածուները, որոնք ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամ են:
59. Օրակարգի առաջին հարցով ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարը զեկուցում է դեկանի թեկնածուներին՝ սույն կարգի 46-րդ կետի պահանջներին բավարարելու հարցը: ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամները նիստի ժամանակ կարող են ծանոթանալ թեկնածուների ներկայացրած փաստաթղթերին: Դեկանի թեկնածուի՝ սահմանված պահանջներին չհամապատասխանելու դեպքում նիստի նախագահի կողմից թեկնածուին ցուցակից հանելու առաջարկը դրվում է քվեարկության: Թեկնածուն հանվում է ցուցակից, եթե առաջարկին կողմ է քվեարկել նիստին ներկա անդամների կեսից ավելին:
60. Օրակարգի երկրորդ հարցով նիստի նախագահը ծրագրային ելույթների համար հրավիրում է դեկանի թեկնածուներին՝ ըստ ազգանունների այբբենական կարգի:
61. Յուրաքանչյուր դեկանի թեկնածուին իր ծրագրի ներկայացման համար տրվում է առավելագույնը 30 րոպե ժամանակ: Յուրաքանչյուր թեկնածուի ելույթից հետո ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից տրվում են հարցեր: Հարց և պատասխանի տևողությունը պետք է լինի 5 րոպեից ոչ ավելի: Թեկնածուին տրվող հարցերը կարող են վերաբերել միայն նրա կողմից ներկայացված փաստաթղթերին և ծրագրին: Հարցերը և պատասխաններն արձանագրվում են ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարի կողմից:
62. Բոլոր թեկնածուներին ուղղված հարցերի և նրանց պատասխանների ավարտից հետո ՌՕԼ ֆակուլտետի խորհուրդը կարող է անցկացնել քննարկում: Քննարկումներից հետո նիստի նախագահը, ըստ ազգանունների այբբենական կարգի, հրապարակում է դեկանի թեկնածուների ազգանուն-անունները: Եթե վերջիններս իրենց անունը հրապարակելու պահին ինքնաբացարկ չեն հայտնում,

ապա նրանց թեկնածությունները ներառվում են քվեաթերթիկում: Քվեաթերթիկները պատրաստվում են խորհրդի քարտուղարի կողմից:

63. Թեկնածուի նիստին չներկայանալու դեպքում քվեարկությունը անցկացվում է առանց նրա կողմից ծրագրի ներկայացման և հարց ու պատասխանի:

64. Մրցույթի փակ (գաղտնի) քվեարկություն անցկացնելու և նրա արդյունքները որոշելու համար ՌՕԼ ֆակուլտետի խորհուրդը բաց քվեարկությամբ իր կազմից ընտրում է 5 անդամից կազմված հաշվիչ հանձնաժողով, որի կազմում չեն կարող ընդգրկվել ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամ հանդիսացող այն անձինք, որոնք առաջադրել են իրենց թեկնածությունները դեկանի պաշտոնի համար:

65. Հաշվիչ հանձնաժողովն իր կազմից ընտրում է նախագահ:

66. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը քվեարկությունը սկսվելուց առաջ ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի քարտուղարից ստանում է քվեաթերթիկները և այբբենական կարգով քվեարկությանը մասնակից անդամների ցուցակը,

67. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի ընտրությունների քվեաթերթիկները ստորագրվում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամների կողմից:

68. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի ընտրությունների քվեաթերթիկում նշվում են թեկնածուների ազգանուն-անունները՝ այբբենական կարգով: Յուրաքանչյուր թեկնածուի ազգանվան-անվան դիմաց առկա է «կողմ» գրառումով վանդակը: Մեկ թեկնածուի առկայության պարագայում քվեաթերթիկում նրա ազգանվան և անվան դիմաց առկա են «կողմ» և «դեմ» գրառումներով վանդակներ:

69. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի յուրաքանչյուր անդամին տրվում է մեկ քվեաթերթիկ:

70. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամը հաշվիչ հանձնաժողովից քվեաթերթիկ ստանալիս ցուցակում ստորագրում է իր անվան և ազգանվան դիմաց:

71. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի այն անդամը, որը դեկանի թեկնածու է, չի կարող մասնակցել քվեարկությանը:

72. ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամը քվեաթերթիկում համապատասխան նշում է կատարում իր նախընտրած թեկնածուի ազգանվան և անվան դիմաց՝ «կողմ» գրառմամբ վանդակում՝ դնելով «V» նշանը: Մեկ թեկնածուի առկայության պարագայում ընտրողը նշում է կատարում «կողմ» կամ «դեմ» գրառումներով վանդակներից միայն մեկում՝ դնելով «V» նշանը: ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի անդամը քվեաթերթիկը գցում է քվեատուփի մեջ:

73. Քվեարկության ավարտից հետո հաշվիչ հանձնաժողովի նախագահը բացում է քվեատուփը, հանում մեկական քվեաթերթիկ, ընթերցում քվեարկության արդյունքը և փոխանցում հաշվիչ հանձնաժողովի անդամներին՝ տեսակավորելու և ձայները հաշվարկելու համար:

74. Քվեաթերթիկը համարվում է անվավեր, եթե չի համապատասխանում սույն կանոնակարգի 72-րդ կետի պահանջներին կամ պարունակում է ընտրողի ինքնությունը բացահայտող նշում: Քվեաթերթիկի անվավերության վերաբերյալ հաշվիչ հանձնաժողովի որոշումը ընդունվում է հաշվիչ հանձնաժողովի անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

75. Հաշվիչ հանձնաժողովն ամփոփում է քվեարկության արդյունքները և կազմում արձանագրություն:

76. Արձանագրության մեջ գրվում է՝

- 1) քվեաթերթիկ ստացածների թիվը (ըստ ցուցակի ստորագրությունների),
- 2) քվեատուփում առկա քվեաթերթիկների թիվը,
- 3) քվեատուփում առկա անվավեր քվեաթերթիկների թիվը,
- 4) թեկնածու(ներ)ի ազգանուն(ներ)-անուն(ներ)ը և յուրաքանչյուրի ստացած «կողմ» ձայների թիվը:

77. Արձանագրությունը ստորագրում են հաշվիչ հանձնաժողովի բոլոր անդամները:



Մեկից ավելի թեկնածուների դեպքում արձանագրության մեջ թեկնածուների ցուցակը տրվում է՝ ըստ հավաքած «կողմ» ձայների քանակի նվազման հաջորդականության:

78. Հաշվիչ հանձնաժողովի նախագահը հրապարակում է քվեարկության արդյունքները ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի նիստում:

79. Դեկանի պաշտոնում ընտրված է համարվում ՌՕԼ ֆակուլտետի խորհրդում ամենաշատ, բայց նիստի մասնակիցների ձայների առնվազն կեսից ավելի ձայներ հավաքած թեկնածուն: Մեկից ավելի թեկնածուների դեպքում, անհրաժեշտ քանակի ձայներ չհավաքելու պարագայում՝ առավելագույն ձայներ հավաքած երկու թեկնածուների միջև անցկացվում է երկրորդ փուլ: Եթե երկրորդ փուլի արդյունքներով թեկնածուներից ոչ մեկը չի հավաքել անհրաժեշտ ձայների քանակը, ապա մրցույթը համարվում է չկայացած: Այդ դեպքում կազմակերպվում է նոր մրցույթ՝ ընդհանուր հիմունքներով:

80. Մեկ թեկնածուի առկայության դեպքում թեկնածուն համարվում է ընտրված դեկանի պաշտոնում, եթե հավաքել է նիստի մասնակիցների առնվազն կեսից ավելի ձայները: Հակառակ դեպքում՝ ընտրությունը համարվում է չկայացած:

81. Քվեարկության արդյունքների հիման վրա խորհուրդն ընդունում է հետևյալ որոշումներից մեկը՝

- 1) ԲՊՀ հիմնադրամի ՌՕԼ ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրվելու մասին,
- 2) ընտրությունը չկայացած համարելու մասին:

82. Քվեարկության արդյունքները ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի կողմից հաստատվում են բաց քվեարկությամբ:

83. ՌՕԼ ֆակուլտետի խորհրդի ընդունած որոշումը ներկայացվում է ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդին, և 1 (մեկ) ամսվա ընթացքում այդ որոշումը գիտական խորհրդի նիստում դրվում է հաստատման՝ փակ (գաղտնի) քվեարկության: Որոշումը

կայացվում է ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդի ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ:

84.ԲՊՀ հիմնադրամի ռեկտորը ՌՕԼ ֆակուլտետի դեկանի պաշտոնում ընտրված թեկնածուի հետ 5 տարի ժամկետով կնքում է աշխատանքային պայմանագիր և հրամանագրում դեկանի պաշտոնում:

85.Ընթացակարգային խախտումների դեպքում ԲՊՀ հիմնադրամի ռեկտորն իրավասու է վերադարձնել ընտրված թեկնածուի գործը՝ ՌՕԼ ֆակուլտետի խորհրդում և/կամ ԲՊՀ հիմնադրամի գիտական խորհրդում 10-օրյա ժամկետում կրկնակի քննարկելու և քվեարկելու համար: